ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2020թ. թիվ 744-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ «ԱՌԿԱ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020թ. սեպտեմբերի 18-ի N 24-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնների» 18-րդ կետը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. մայիսի 20-ի N 09-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգի» 8-րդ կետի 2)-րդ ենթակետը, հաշվի առնելով «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից 2020թ. հոկտեմբերի 5-ին «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գայի անվան թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կատարված թեստավորման արդյունքները և նույն ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի 06.10.2020թ. թիվ Ե-478 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

2020թ. հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գայի անվան թիվ 21 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ժամանակավոր դադարեցնել «առկա» ուսուցումը և կազմակերպել հեռավար ուսուցում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

10/7/2020

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 7
ք.Վանաձոր